ՉԵԽԱԿԱՆ 1848-1849 ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ԵՎՐՈՊԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

Չեխիան XIX դարի սկզբում համարվում էր ավստրիական կայսրության տնտեսապես զարգացած նահանգներից մեկը և ազգային վերածնունդ էր ապրում:

Կայսրությունում 1848թ. ծավալված հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներն իրենց վրա բևեռեցին ժամանակի հայ պարբերական մամուլի ուշադրությունը: Արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի ծայնափող «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթն իր ընթերցողներին հանգամանորեն պատմում է ճնշվող բոլոր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների մասին: Թերթի լրատվությունը չեխերի պայքարի մասին բավականին զուսպ ու սեղմ է, որը մեծ մասամբ տեղեկատվական բնույթ ունի և քողարկված ավստրիամետ ուղղվածություն: Անդրադառնալով Պրահայում չեխական ազգային շարժման սկզբնավորմանը, «Եվրոպան» գրում է, որ սահմանադրական շարժումը Վիեննայում դեռևս չսկսված չեխերը կայսրին «աղերսագիր» ուղարկեցին և «նույն տեսակ զանազան նորոգություններ» խնդրեցին: Մարտի 15-ի կայսրի սահմանադրություն հռչակելու խոստման լուրը Պրահա հասնելուն պես չեխերը նույնպես «սկսան մեծ ուրախության հանդեսներ կատարել»:[1]

Այս լուրը Չեխիայի համերկրային նախագահ կոմս Ստադիոնը հայտնեց Պրահայի թատրոնում, որը ներկա գտնվողներին անսահման ուրախություն պատճառեց: Թատրոնը մեկեն դատարկվեց, մարդիկ ուրախությունից դուրս թռան փողոց և խումբ-խումբ ժողովելով՝ «կեցցե կայսրը, կեցցե սահմանադրությունը» բացականչություններով լուսավորված քաղաքում «ջահերով գեղեցիկ թափոր կազմակերպեցին»:[2]

«Աղերսագիր» ասելով «Եվրոպան» նկատի ունի Սվյատովացլավյան ժողովի մարտի 11-ի որոշումը, որն իրականում կայսրին ուղղված քաղաքական լուրջ պահանջներ պարունակող հանրագիր էր: Այն պահանջում էր չեխերով բնակեցված հողերի համար ստեղծել միասնական օրենսդիր մարմին, շնորհել

[1] «Եվրոպա», 1848, 21 մարտի, թիվ 12,էջ 50:
[2] Նույն տեղում, 1848, 28 մարտի, թիվ 13, էջ 53:

քաղաքական ազատություններ, սահմանել չեխերենի և գերմաներենի հավասարություն, անձի անձեռնմխելիություն, վերացնել ավատատիրական պարհակները և այլն: Ինչ վերաբերվում է չեխերի համընդհանուր ուրախությանը, ապա դա զուտ չեխական երևույթ չէր: Սահմանադրություն հռչակելու Ֆերդինանդ I կայսրի տված խոստումն առաջ էր բերել ավստրիական կայսրության բոլոր ժողովուրդների աննախադեպ ոգևորությունը: Կայսրը ձգտում էր նրանց զիջումների գնով ամուր պահել իր գահը, ուստի բավարարեց հունգարական պատվիրակության պահանջները: Դա ոգևորեց չեխերին և անհանգստացրեց Չեխիայում ավստրիական իշխանավորներին: Մարտի 16-ին կոմս Ստադիոնը չեխերի պահանջի կապակցությամբ գերմանական խոշոր բուրժուազիային առաջարկեց Սվյատովացլավյան կոմիտեի հետ համաձայնություն ձեռք բերել համատեղ գործելու համար: Սվյատովացլավյան կոմիտեն պաշտոնական Վիեննային հղած իր առաջին հանրագրի կապակցությամբ ավստրիական կառավարությունից խուսափողական պատասխան ստացավ: Չեխական ազգային շարժման ղեկավարները կայսրին երկրորդ անգամ հանրագիր ուղարկեցին,որին Ֆերդինանդ I ապրիլի 8-ին պատասխանեց, այսպես կոչված, «Չեխիայի հրովարտակով»: Նրանով կայսրը խոստանում էր Չեխիայի համար ստեղծել կենտրոնական նախարարություն, ճանաչում էր չեխերենի և գերմաներենի հավասարությունը պետական հաստատություններում և կրթության մեջ: Սակայն չեխական թագավորության երեք մասերի միավորման հարցը չլուծվեց և հանձնվեց ապագա ավստրիական ռայխստագի քննարկմանը և ոչ թե չեխական համերկրային սեյմի, ինչպես սկզբում նախատեսում էր կայսրը՝ առաջին հանրագրին տված պատասխանում: Կայսրական հրովարտակով Չեխիայում փոխարքա էր նշանակվում Ֆերդինանդ I ազգական Ֆրանց-Իոսիֆը, իսկ համերկրային նախագահ՝ կոմս L.Տունը:[1]

«Եվրոպան» չեխական ազգային-քաղաքական շարժման այս կարևորագույն հարցին չի անդրադառնում: Ժողովրդական զանգվածների քաղաքական ակտիվությանը զուգահեռ խորացան հակասությունները չափավորների և արմատականների, սահմանադրական միապետության և հանրապետության կողմնակիցների միջև: Դա հանգեցրեց Չեխիայում քաղաքական իրադրության սրմանը: Ապրիլի 25-ին կայսրի հռչակած սահմանադրությունն ամբողջությամբ տպագրելով «Եվրոպան» նշում է, թե կայսրության բոլոր ժողովուրդները դրանից «գոհ եղան»: Իրականում չեխերը, հանուն ապրիլի 8-ի հրովարտակի,

---

[1] И.И.Удальцов. Указ.соч. стр. 91;С.Б.Кан. Революция 1848г. в Австрии и Германии. М., 1848, стр. 64.

հրաժարվեցին ճանաչել սահմանադրությունը, որին, քաղաքական նկատառումներից ելնելով՝ միացան նաև Վիեննայի ժողովրդավարական ուժերը: Դա մայիսի 15-ին Վիեննայում հանգեցրեց կառավարական զորքերի և ցուցարարների բախմանը: «Եվրոպան» մանրամասնորեն պատմում է այդ ընդհարման ու Չեխիայում նրա արձագանքի մասին: Թերթը գրում է, որ ընդհարման և կայսրի Վիեննայից հեռանալու լուրը «մեծ զարմանք ու ցնցում պատճառեց» կայսրության նահանգներում: Մասնավորապես, Մորավիայի գավառական ժողովը կայսրի մայրաքաղաքը լքելուն պես դիմեց կառավարությանը՝ «սահմանադրությունը հաստատուն պահելու ու անկարգություններին վախճան տալու համար», իսկ չեխերը պատգամախումբ ուղարկեցին կայսրի մոտ՝ նրան Պրահա հրավիրելու նպատակով:[1]

Ըստ «Եվրոպայի», կայսրի Վիեննայից հեռանալու լուրը «ամենեն ավելի մեծ ազդեցություն» ունեցավ Պրահայում, որտեղ, մի կողմ թողնելով իրենց քաղաքական վեճերն ու տարաձայնությունները, «ամենքը մեկ սիրտ և մեկ հոգի եղան» և իրենց հավատարմությունը դրսևորեցին կայսրին: Թերթը տպագրում է չեխերի ազգային ժողովի՝ կայսրին ուղղված ուղերձի «երևելի մասը», որում հավատարմության և երախտագիտության խոսք էր ասվում կայսրին և ափսոսանք հայտնվում, որ չեխ ազգը «բարեբախտություն չունեցավ» կայսրական «մեծափառությանը ուրախությամբ» Պրահայում տեսնելու համար:[2]

Թերթն ընդգծում է նաև կայսրի բարեհաճ վերաբերմունքը չեխերի նկատմամբ և պատմում մայիսի վերջին նրանց պատվիրակությանը ցույց տված ջերմ ընդունելության մասին, որը միջև անգամ առաջ բերեց Վիեննայի լրագրերի նախանձը: Սակայն չեխերը որքան էլ կայսրին հավատարիմ լինեն ու նրա նկատմամբ «մեծ սեր ունենան», եզրակացնում է «Եվրոպան», միևնույնն է «Վիեննայի կառավարությունից գլուխ քաշելու ու առանձին կառավարություն ունենալու բաղձանքեն ազատ չեն»:[3]

«Եվրոպան» չեխական ազգային պայքարի մեջ ակնհայտորեն տարբերակում չէր տեսնում և ընդհանրական մոտեցում է ցուցաբերում նրան: Մինչդեռ չեխական ազգային-քաղաքական շարժումը պառակտված էր: Չեխական չափավոր-լիբերալները, կամ՝ ավստրոչեխերը, հանդես էին գալիս սահմանադրական միապետության և ավստրիական կայսրությունում չեխերի ինքնավարության օգտին: Նրանց առաջնորդներից Ֆ. Պալացկին գտնում էր, որ

---

[1] «Եվրոպա», 1848, 23 մայիսի, թիվ 21, էջ 88:
[2] Նույն տեղում, 1848, 30 մայիսի, թիվ 22, էջ 95:
[3] Նույն տեղում, 1848, 6 հունիսի, թիվ 23, էջ 97:

«Հաբսբուրգների կայսրության պահպանումը, ամբողջ Եվրոպայի և նույնիսկ ամբողջ մարդկության գործն է» և եթե «Ավստրիական կայսրությունը գոյություն չունենար, ապա մենք պետք է պարտավորվեինք մարդկության շահերից ելնելով անհապաղ այն ստեղծել»:[1]

Արմատական-դեմոկրատները ձգտում էին դուրս գալ ավստրիական կայսրության կազմից և չեխական պատմական հողերը միավորել ինքնուրույն պետության մեջ:

1848թ. ամռանը իրադրությունը Չեխիայում դարձավ առավել լարված՝ կապված այն բանի հետ, որ մայիսի 18-ին Ֆրանկֆուրտում իր աշխատանքները սկսած համագերմանական խորհրդարանը հանդես եկավ չեխական և մորավական հողերը միավորվել ցանկացող գերմանական պետությունների հետ բռնությամբ միացնելու օգտին: «Եվրոպան» քաջատեղյակ էր այս մասին և նշում է, որ ներկայումս բոհեմիացիները «մեծ խնդիր» ունեն: Նախկինում նրանք գերմանական դաշնակցության մեջ էին, բայց հիմա նրանց մի մասը «իրենց ազգայնության հոգին ավելի արթնացած ըլլալով», իսկ մյուս մասն էլ տեսնելով, որ ֆրանկֆուրտյան խորհրդարանը գերմանական պետությունները «միացնելու կջանա», որով չեխերի և սլավոնական մյուս ժողովուրդների «ազգայնությունը կորսվելու և գերմանացի սեպվելու վախ կա», Բոհեմիայի ազգային ժողովում որոշեցին ֆրանկֆուրտյան խորհրդարանի համար պատգամավորներ չուղարկել:

Ըստ թերթի, չեխերը հայտարարում են, որ այսուհետև իրենց չեն համարում իր գոյությունը դադարեցրած Գերմանական միության անդամ և չեն ցանկանում անդամագրվել նոր միությանը: Նրանք միաժամանակ Ավստրիային «խորհուրդ կուտան» չխառնվել ֆրանկֆուրտյան ժողովին, այլապես «իշխանությունը կրնա տկարանալ» և ղեկավարվել ժողովի կողմից:[2]

«Եվրոպան» իրավացի է. չեխերը հրաժարվեցին մասնակցել ֆրանկֆուրտյան խորհրդարանի ընտրություններին՝ քաջ գիտակցելով, որ գերմանական պետության կազմի մեջ մտնելը նշանակում է կործանել ազգային պետություն ունենալու գաղափարը: Չեխական հողերի ընդգրկվելը Գերմանիայի կազմում հավասարազոր էր չեխ ժողովրդի կործանմանն ու գերմանականացմանը, քանի որ այս դեպքում չեխերը փոքրամասնություն կկազմեին Գերմանիայում, մինչդեռ ավստրիական կայսրությունում նրանք սլավոնական ժողո-

---

[1] Освободительное движение в Австрийской империи. Возникновение и развитие. Конец XVIII в.-1849г. Ред.Колл, В.А.Дьяков и др. М., 1980, стр. 394.
[2] «Եվրոպա», 1848, 16 մայիսի, թիվ 20, էջ 83:

ժողովուրդների հետ միասին կազմում էին բնակչության մեծամասնությունը:[1]

Քաղաքական ընդհանուր դատողություններից բացի, որոնցով ղեկավարվում էին չեխ լիբերալները, ինքնապահպանման զգացումը նրանց դրդում էր չվստահել Ավստրիային ու Գերմանիային իրենց ամենատարրական ազգային իրավունքները: Այդ պարճառով էլ, ինչպես իրավացիորեն գրում է «Եվրոպան», չեխերը Բուկովինա, Մորավիա և Սիլեզիա մարդիկ են ուղարկում, որպեսզի նրանց բնակչությանը նույնպես համոզեն պատգամավորներ չուղարկել Ֆրանկֆուրտ: Տեղեկանալով այդ մասին ֆրանկֆուրտյան խորհրդարանը իր ներկայացուցիչներին ուղարկեց Չեխիա՝ փորձելով նրանց համոզել մասնակցել ժողովին, բայց արդյունքի չհասավ: Դա առաջ բերեց ֆրանկֆուրտյան խորհրդարանի դժգոհությունը, որի մի խումբ պատգամավորներ առաջարկեցին սլավոնական ժողովուրդներին զենքի ուժով ճնշել, բայց ժողովն այդպիսի որոշում չընդունեց: «Եվրոպան» նկատի ունի Ավստրիայի ներկայացուցիչ Շիլլինգին, որը խորհրդարանում բացահայտ հայտարարեց. «Քանի որ հնարավորություն չկա Չեխիան պահպանել Գերմանական միության կազմում համոզմունքի ճանապարհով, ուստի նա պետք է Գերմանիային շղթայվի սրով»:[2]

«Եվրոպայի» կարծիքով Ավստրիայի համար սլավոնական ժողովուրդների ազգային շարժումը մի կողմից «օգտակար է», քանի որ ֆրանկֆուրտյան խորհրդարանի չափից ավելի ուժեղանալը Ավստրիայի ինքնիշխանությանը վտանգ կսպառնա, իսկ չեխերն այս պարագայում «գերմանացող դեմ պարիսպ են»: Ըստ «Եվրոպայի», արտաքուստ միտում է նկատվում, որ սլավոնները, մանավանդ՝ չեխերը, գլուխ բարձրացնելու և Ավստրիայից «զատվելու միտք» ունեն: Դրա դեմ թերթը լուրջ խոչընդոտ է համարում Չեխիայում բնակվող հազարավոր գերմանացիներին, որոնք կխանգարեն իրականացնել այդ մտադրությունը: Բացի այդ, Չեխիայում «մեծ պատիվ ու հարգանք» ունեցող կայսրությանը հավատարիմ քսան ազնվականներ հայտնել են, թե իրենց համար շատ ավելի նպատակահարմար ու ցանկալի է «Ավստրիայի հետ ավելի ևս միանալ և ասանկ ատենուան մեջ անոր հաստատություն ըլլալ»: Այս նպատակով նրանք Ավստրիայի բոլոր սլավոններին հրավիրում են Պրահա, որպեսզի իրենք էլ իրենց ազգային ժողովը ունենան ու միաբանվեն:

Չեխիայի գերմանացիներն, իսկապես, ոչ միայն կողմ էին ընտրություններին մասնակցելուն, այլև չեխական հողերը Գերմանիային միացնելուն, առանց որի Գերմանիայի միավորումը նրանք չէին պատկերացնում: «Եվրոպա-

---

[1] И.И.Удальцов. Указ. соч., стр. 104:

[2] Е.Пристер. Краткая история Австрии. М., 1952, стр. 375;И.И.Удальцов. Указ. соч. стр. 106.

յի» դիտարկումը ճշմարիտ է նաև այն առումով, որ չեխական լիբերալներն ու պահպանողականները ավստրիական կայսրությունը գերադասում էին Գերմանական միությունից: Եվ վերջապես, չեխական ազգային կոմիտեն գտնում էր, որ Չեխիայի մասնակցությունը Ֆրանկֆուրտյան խորհրդարանին պետք է, որոշի չեխական սեյմը և ոչ թե՝ ավստրիական իշխանությունները:[1]

Ավստրիայի կառավարությունը, շարունակում է թերթը, Ֆրանկֆուրտի խորհրդարանին չգրգռելու համար չեխերին հրամայեց պատգամավորներ ընտրել:

«Եվրոպան» իրավացի է. Ավստրիայի ներքին գործերի նախարար Պիլլերսդորֆը, հաշվի չառնելով չեխերի դիմադրությունը, կարգադրեց պատգամավորներ ընտրել Ֆրանկֆուրտյան խորհրդարանի համար, քանի որ Ավստրիան այնտեղ պիտի ունենար իր ներկայացուցիչները: Չեխիայում անցկացված ընտրությունները գերմանացիներին ցանկալի արդյունք չտվեցին, բայց դա չխանգարեց նրանց հայտարարել, որ Գերմանիայի միավորումը, միևնույնն է, կկայանա:

Չեխերը Ֆրանկֆուրտյան խորհրդարանին հակադրեցին Պրահայում կայացած համասլավոնական համագումարը, որը միաձայն մերժեց սլավոնական ժողովուրդների ընդգրկվելը միավորվող գերմանական պետությունում: Համագումարն իր աշխատանքը չավարտեց՝ Պրահայում սկսված ապստամբության պատճառով:[2]

«Եվրոպան» հանգամանորեն պատմում է հունիսի 12-16-ը տեղի ունեցած ապստամբության մասին, որի «պատճառ եղան խիստ չեխության կամ սլավոնության կողմնակիցները, այսինքն այն Պոհեմացիները, որոնք գերմանացոց հակառակ են ու անոնց տակեն կուզեն ելլել և ազգային տերություն կանգնել»:[3]

Միանգամայն ճիշտ հասկանալով չեխերի ազգային շարժման նպատակը և մանրամասնորեն նկարագրելով ապստամբության ամբողջ ընթացքը, «Եվրոպան» հակված է ապստամբության բռնկման համար հանդիմանել չեխերին և սլավոնական շարժման կողմնակիցներին: Մինչդեռ իրականում ապստամբությունը սկսվեց այն բանից հետո, երբ Պրահայի զինվորական կայազորի հրամանատար Վինդիշգրեցը սկսեց բացահայտ զինվորական նախապատրաստություններ տեսնել քաղաքի դեմ:

---

[1] И.И.Удальцов. Указ. соч., стр.104-106.
[2] Е.Пристер. Краткая история Австрии. М., 1952, стр. 376-377.
[3] «Եվրոպա», 1848, 20 հունիսի, թիվ 25, էջ 106:

Դրանից անհանգստացած չեխերը Վինդիշգրեցից պահանջեցին լքել Պրահան և ուսանողներին զենք հատկացնել: Նա մերժեց այդ պահանջը և հունիսի 12-ին կարգադրեց կրակ բացել Վենցելի հրապարակում խաղաղ ցույցի դուրս եկած անզեն բնակչության վրա: Երեք օր շարունակ քաղաքում արյունահեղ մարտեր ընթացան ժողովրդական ուժերի և ավստրիական մոտ 40 հազարանոց զորքի միջև: Միայն քաղաքը հրետակոծությունից իսպառ չավերվելու մտահոգությունից դրդված չեխերը զենքը ցած դրեցին ու հունիսի 17-ին անձնատուր եղան:

«Եվրոպայի» պատմելով Պրահայից ստացված լուրերը «շատ տրտմալի են», քաղաքը ռմբակոծությունից խիստ տուժել է և «ողորմելի կերևա», տներում գրեթե բնակիչ չի մնացել, իսկ «բոլոր խելքը գլուխը մարդիկ» դեպի Վիեննա են փախչում:

Չերբակալված ուսանողների հարցաքննությունից պարզվում է, շարունակում է թերթը, որ «Պրահայի ապստամբությունը առաջագոյն եփված պատրաստված էր» և պիտի կայանար հունիսի 18-19-ի գիշերը, որի նպատակն էր «Բոհեմիան անջատել Ավստրիայից»:[1]

Սա ապատեղեկատվություն էր. իրականում դեռ 1848թ. մարտին ավստրիական զինվորականությունը Վինդիշգրեցի ղեկավարությամբ մշակել էր Պրահան գրավելու գաղտնի պլան և այն իրականացնելու համար սպասում էր հարմար առիթի:[2]

Հունիսյան ժողովրդավարական ապստամբության պարտությունից հետո Չեխիայում իրադրությունը փոխվեց: Պրահայում պաշարողական դրություն մտցվեց, Ազգային կոմիտեն ցրվեց, քաղաքացիական աշխարհազորը վերացվեց, սկսվեցին ձերբակալությունները: Ավստրիական կառավարությունն արագորեն մոռացավ չեխերին տված խոստումները:

Չեխական ազգային-ազատագրական շարժման լիբերալ և բուրժուական առաջնորդները ապստամբության օրերին հուսահատ փորձեր էին անում զինադադար հաստատելու, իսկ նրա ճնշումից հետո հայտարարում էին, թե իրենք ոչ մի մտադրություն չունեն անջատվել կամ հեռանալ ավստրիական գահից և իրենց ազգային ծրագրի լավագույն ու հիմնական սկզբունքը համարում են կայսրության հետ ներքին անքակտելի կապ պահպանելը:[3]

Հունիսյան ապստամբության պարտությունից հետո չեխական ազգային-ազատագրական շարժումը թեպետ դեպի անկում գնաց, սակայն արմատա-

---

[1] «Եվրոպա», 1848, 27 հունիսի, թիվ 26, էջ 111:
[2] И.И.Удальцов. Указ. соч., стр. 172.
[3] С.Б.Кан. Революция, 1848г. в Австрии и Германии. М., 1948, стр. 149.

կան-դեմոկրատական ուժերը շարունակեցին պայքարը Համբսբուրգների դեմ: Սա չի վրիպում «Եվրոպայի» ուշադրությունից, ըստ որի սեպտեմբերին Մորավիայից 500 չեխ ուսանողներ բավականաչափ զինված ու 30 կառք ռազմամթերքով մեկնել են Հունգարիա՝ «Սլավոներուն ու խորվաթներին օգնելու համար»:[1]

Հոկտեմբերին Պրահայի ուսանողությունը մի պատվիրակություն ուղարկեց նաև ապստամբած Վիեննային օգնության ու կանգնեց նրանց դիրքերում:

«Եվրոպայի» լրատվությամբ Պրահան այդ օրերին «զինվորական կերպարանք» ուներ, որտեղից ամեն օր զինվորներ, ռազմամթերք ու հանդերձանք էր ուղարկվում Վիեննա:

Վիեննայի դեպքերը Պրահայի ուսանողության շրջանում նոր ելույթներ առաջ բերեցին, որոնցից մեկում ուսանողների առաջ «գեղեցիկ ճառ» արտասանեց պատգամավոր Ռիգերը: Նա համոզում էր, որ Վիեննայի բռնկված ապստամբության պատճառը, ոչ թե «ազգայնության կամ ազատության սերն եղավ, ապա Մաճառներուն կաշառը, որոնց ուզածը ըստ ամենայնի սլավոներուն ուզածին հակառակն է»:[2]

Հունգարական ազատագրական պայքարը, նպատակ էր հետապնդում ծեռք բերել անկախություն: Սակայն հունգարացիները մտադիր չէին իրենց հերթին անկախություն տալ թագավորությունում ապրող սլավոնական ժողովուրդներին, հատկապես՝ սերբերին ու խորվաթներին:

Ինչ վերաբերվում է չեխերին, ապա 1848թ. աշնանը նրանք հանդես չեկան Ելաչիչի գլխավորած խորվաթական բանակի դեմ, որը գործում էր ավստրիական արքունիքի հետ դաշնակցած: Դրանով չեխերը, ըստ էության, հարված էին հասցնում իրենց ազգային շահերին: 1849թ. չեխերի վերաբերմունքը կտրուկ փոխվեց Ելաչիչի, իսկ մարտին՝ նաև հունգարական ազատագրական պայքարի նկատմամբ: Չեխերը հասկացան, որ հունգարացիների հաղթանակը բխում է ավստրիական կայսրության բոլոր ճնշվող ժողովուրդների շահերից: Դրանից ելնելով չեխ արմատականները 1849թ. մայիսի 12-ին փորձեցին նորից ապստամբություն բարձրացնել, բայց կառավարությունն այն բացահայտեց և զորքերի օգնությամբ ճնշեց:[3]

«Եվրոպան» Չեխիայում 1849թ. հաստատված քաղաքական իրավիճակի մասին չի պատմում և ցանկանալով ընդգծել ավստրիական կայսրության

---

[1] «Եվրոպա»,1848, 3 հոկտեմբերի, թիվ 40, էջ 168:
[2] Նույն տեղում, 1848, 24 հոկտեմբեր, թիվ 43, էջ 180:
[3] И.И.Удальцов, указ. соч., стр. 245-247.

նկատմամբ չեխերի բարյացակամ վերաբերմունքը, անդրադառնում է Ավստրիայի երիտասարդ կայսր Ֆրանց-Իոսիֆի Պրահա կատարած երկու այցելություններին: Թերթը նշում է, որ քաղաքի բնակչությունը կայսրին «փառավորությամբ և ցնծությամբ»[1] ընդունեց: Այսպիսի գնահատական տալը ոչ այնքան իրականության փաստումն է «Եվրոպայի» կողմից, որքան նրա դիրքորոշումը: Համակողմանիորեն լուսաբանելով ավստրիական կայսրությունում ապրող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, «Եվրոպան» մշտապես իր հրապարակումներում աշխատում էր ընդգծել սլավոնական ժողովուրդների բարեհաճ վերաբերմունքը ավստրիական միապետության նկատմամբ: Թերթն առհասարակ չէր դրվատում այդ ժողովուրդների ազատագրական պայքարը, որն ուղղված էր կայսրության դեմ և մեծ մասամբ դրանք ներկայացնում էր որպես «խռովություն», որը նպատակ էր հետապնդում դուրս գալ ավստրիական կայսրության կազմից:

[1] «Եվրոպա», 1849, 27 նոյեմբեր, թիվ 48, էջ 201: